

**ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆԻ ՈՒ ՊԱՐՍԿԵՐԵՆԻ ԿՐԿՆԱՎՈՐ
ՀԱՐԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

ԻՍԱ ԱԼԻՈՒԵԶԱՅԻ

Սույն հոդվածում նպատակ է դրվել համեմատելու արդի հայերենի ու պարսկերենի կրկնավոր հարադրությունների կամ բառակրկնությունների բառային իմաստը, հնչյունական ձևը, ձևաբանական կառուցվածքն ու շարահյուսական հարաբերությունները:

Կրկնավոր վերլուծական հարադրությունները ներկայացնում են նույն բառի փոփոխված կամ անփոփոխ, ամբողջական կամ հատվածական կրկնությունը, ինչպես՝ *արագ-արագ*, *սխալ-միտալ*, *շիփ-շիտակ* և այլն:

Կրկնավոր բաղադրությունները նախապես եղել են շարահյուսական սովորական կապակցություններ, որոնցով արտահայտվել են իմաստի սաստկացում, տևականություն, հավաքականություն, խոսողի կամ հեղինակի կամային-զգացական այլևայլ վերաբերմունքներ և այլն¹: «Կրկնավոր հարադրությունների անդամները հավասարաթեք չեն, այլ նրանցից մեկը կրկնության հիմքն է, մյուսը՝ նմանակը, կրկնության հիմնական անդամը կոչվում է կրկնյալ, իսկ նմանակը՝ կրկնորդ»²:

Հայերենում և պարսկերենում առկա կրկնավոր հարադրություններում բաղադրիչ տարրերի միջև ներքին շարահյուսական տեսակետից առկա է բացառապես համադասական հարաբերություն: Ներկա հոդվածում բերված բոլոր օրինակները վկայում են դրա մասին:

Ինչպես հայերենում, այնպես էլ պարսկերենում կրկնվում են սովորաբար կարճ՝ միավանկ և երկվանկ, սակավ դեպքերում՝ երեք և ավելի վանկ ունեցող բառեր, հմմտ.՝ *մարդ-մուրդ*, *պարսպ-սարսպ*, *քեզ ու քեզ*, *արտասահման-մարտասահման* և այլն, زود زود [zūd zūd] «շուտ-շուտ», تک و تک [tak o tāk] «հատուկեմ», խոսակցական՝ «թաքութութ» آخون والاخون [ālāxun vālāxun] «դռնեդում» և այլն: Ինչպես երևում է օրինակներից, պարսկերենում հարակցված կրկնությունները սովորաբար գծիկով չեն գրվում:

Երկու լեզուներում էլ կրկնությունները, ըստ իրենց բաղադրիչների գործառական փոխհարաբերության (խոսքիմասային գործառության), կարող են լինել համագործառական և փոխգործառական: Առաջին դեպքում կրկնավոր հարադրությունն ունի խոսքիմասային այն արժեքը, ինչ նրա բաղադրիչները, օրինակ՝ գոյական՝ *աման-չաման*, *գիրք-միրք*, ظرف و ظروف [zarf o zorūf] «աման-չաման», کتاب متاب [ketāb metāb] «գիրք-միրք», ածական՝ մասամբ մակբայական գործածությամբ՝ *փոքր-փոքր*, *զիզի-պիզի*, *կասկարմիր*, پاره پاره [pāre pāre] «ծվեն-ծվեն», تند تند [tond tond] «արագ-արագ» և այլն:

¹ Տե՛ս **Գ. Սելիքյան**, Կրկնավոր և հարադրավոր բարդությունների և զուգորդությունների պարսկերեն-հայերեն բառարան, Եր., 2008, էջ 4:

² **Գ. Ջահուկյան**, Ժամանակակից հայոց լեզվի իմաստաբանություն և բառակազմություն, Եր., 1989, էջ 172:

Երկրորդ դեպքում առկա է փոխանցում մի խոսքի մասից մյուսը, ինչպես՝ գոյական → ածական (մասամբ՝ մակբայ)՝ *թել-թել, տեսակ-տեսակ, երամ-երամ*, تکه تکه [tekke tekke] «կտոր-կտոր», گروه گروه [gorūh gorūh] «խումբ-խումբ», ածական → մակբայ (երբեմն՝ նաև ածականական արժեքի պահպանմամբ)՝ *մեծ-մեծ, տաք-տաք*, گنده گنده [gonde gonde] «մեծ-մեծ», داغ داغ [daʁ daʁ] «տաք-տաք», ածականական թվական → մակբայական թվական՝ *մեկ-մեկ, երկու-երկու, երեք-երեք*, یکی یکی [yeki yeki] «մեկ-մեկ», دوتا دوتا [dotā dotā] «երկու-երկու», سه سه تا سه تا [setā setā] «երեք-երեք» և այլն:

Եթե հայերենում կրկնությունները, ըստ կրկնվող եզրերի միացման եղանակի, լինում են հարակցական՝ *տեսակ-տեսակ, գունդ-գունդ*, շաղկապական՝ *ախտ ու բախտ, ծակ ու ծուկ*, և նախդրական՝ *րոպե առ րոպե, տող առ տող*³, ապա պարսկերենում կրկնավորները լինում են շարահարակական՝ تکه تکه [tekke tekke] «կտոր-կտոր», گروه گروه [gorūh gorūh] «խումբ-խումբ», շաղկապական՝ تک و توک [tak o tūk] «հատուկեմտ» և հավելադրական՝ سر تا سر [sar tā sar]՝ բառացի՝ «գլուխ մինչև գլուխ = ծայրից ծայր», قدم به قدم [qadam be qadam] բառացի՝ «քայլ քայլին = քայլ առ քայլ»:

Վերը նշված դասակարգումներից պարզվում է, որ եթե հայերենում հարակցական կրկնավոր հարադրությունների բաղադրիչները կապակցվում են գծիկով, ապա պարսկերենում նրանց համարժեք բաղադրությունները հաճախ միանում են իրար առանց որևէ նշույթի. պարզապես կապվում են շարահարությամբ:

Արդի պարսկերենում համեմատաբար ավելի շատ շարահարական կրկնություններ կազմում են ձայնարկությունները, ինչպես՝ به به [bah bah] «ապրես» (հիացմունքի բացականչություն), دامب دامب [dāmb dāmb] (դիուլի, թմբուկի ձայն), قار قار [qār qār] «կը՛ռ կը՛ռ» և այլն:

Երկու լեզուներում էլ մի առանձին խումբ են ներկայացնում բայական կրկնավոր հարադրությունները: Այս տեսակի կրկնավորները կազմվում են դիմավոր բայի կրկնությամբ, որոնց մեջ բայն առաջին եզրում դրվում է դրական խոնարհումով, երկրորդում՝ ժխտական: Թեև նման կրկնությունների բաղադրիչները ձևականորեն պահում են եղանակաժամանակային և դիմաթվային ձևաբանական կարգերը, բայց դրանց քերականական իմաստները արդեն մթազնել են, և դրանք արտահայտում են մի այլ, նոր իմաստ:

Հատկանշական է, որ եթե հայերենում այս կարգի կրկնությունները, ըստ իրենց բաղադրիչների կապակցության եղանակի, կազմվում են գծիկով, ապա պարսկերենում գծիկով կազմված բաղադրությունների, նաև կրկնավոր հարադրությունների բացակայության պատճառով այս տեսակի կրկնավորների բաղադրիչները կապակցվում են շաղկապական կամ շարահարական (առանց նշույթի) եղանակով: Հմնտ.՝ *տեսավ-չտեսավ, եկավ-չեկավ, ունեցած-չունեցած* և այլն, شسته و نشسته [šoste va našoste] բառացի՝ «լվացած և չլվացած = ամբողջապես չլվացած, բոլորը խառը իրար», رفتہ رفتہ [rafte narafte] բառացի՝ «զնացած-չզնացած = հենց որ զնաց», گونگو [gonko]

³ Տե՛ս **Էդ. Աղայան**, Ընդհանուր և հայկական բառագիտություն, Եր., 1984, էջ 231 և հաջ.:

[begū nagū] բառացի՝ «ասա՝մի՝ ասա = վեճ, վիճաբանություն, տարակարծություն» և այլն:

Պետք է նշել, որ որոշ գրողների երկերում հազվադեպ կարող ենք տեսնել գծիկով կազմված բարդություններ, առավելապես հարադրական նորաբանություններ, ինչպես՝ اسلاو - بالتي [bālti-slāvi] «բալթյան-սլավոնական», سیاسی-اجتماع [siyāsi-ejtemāi] «քաղական-հասարակական» և այլն: Ըստ ոմանց՝ գծիկով կազմված բարդությունները պարսկերենում նախադեպ չեն ունեցել, մինչդեռ դուրսից Ղուլամ Ռեզա Թաշվիդիի կարծիքով պարսկերենում այս եղանակով կազմված բարդությունների շատ օրինակներ կան: Նա գտնում է, որ որոշ շարահարական բարդություններ, ընդ որում՝ կրկնավորներ, նախապես եղել են գծիկով բարդություններ, ինչպես՝ پیش پیش [piš piš] «նախապես, նախօրոք», سوراخ سوراخ [sūrāx sūrāx] «ծակ-ծակ» և այլն: Ըստ նրա՝ այս եղանակը թեպետ պարսկերենում հազվադեպ է հանդիպում, բայց այսուհետ կարող է ծառայել բառակազմության գործում⁴:

Հայերենում մի առանձին խումբ են ներկայացնում բայական կրկնավոր հարադրությունները, որոնց մեջ բայն առաջին եզրում դրվում է անորոշ դերբայի գործիական հոլովով, ինչպես՝ սիրելով-սիրել, մոռանալով-մոռանալ, ուրանալով-ուրանալ և նման կազմություններ, որոնք արտահայտում են իմաստի սաստկացում:

Այս եղանակով կազմված բայական կրկնավոր հարադրությունները, հայերենին հատուկ լինելով, պարսկերենում բացարձակապես չեն կազմվում:

Մյուս կողմից՝ պարսկերենում կազմվում են այնպիսի բայական կրկնավոր հարադրություններ, որոնց երկու եզրերը դրվում են հրամայական եղանակի եզակի թվի մեծ մասամբ դրական խոնարհմամբ, և ավելի քիչ՝ առաջին եզրը դրական, իսկ երկրորդը ժխտական ձևով, ինչպես՝ بگیر بگیر [begir begir] բառացի՝ «բռնիր բռնիր = ձերբակալություններ, բռնություններ», بچاپ بچاپ [bečāp bečāp] բառացի՝ «կողոպտիր կողոպտիր = ավան-թավան», بگو مگو [begū magū] բառացի՝ «ասա՝ մի՝ ասա = վեճ, վիճել» և այլն:

Այս կարգի կրկնություններն արտահայտում են իմաստի սաստկացում ու գործողության բազմակիություն, որոնք առավելապես հատուկ են ժողովրդախոսակցական լեզվին:

Շաղկապական կրկնավոր հարադրությունների բաղադրիչները հայերենում կապակցվում են *և*, *ու*, իսկ պարսկերենում՝ و (կարճ՝ *o* = ու, երկար՝ *va* = և) շաղկապով, ինչպես՝ *ծակ ու ծուկ, ես ու ես, ինքս ու ինքս* և այլն, تک و تک [tak o tūk] «հատուկե՛նտ», خودم و خودم [xodam va xodam] «ինքս ու ինքս» և այլն: «Նշելի է, որ պարսկերենի و [o, va] շաղկապի *o* տարբերակը հարաբերակից է հայերենի *ու* միավորման շաղկապին, *va* տարբերակը՝ ավելի շուտ՝ *և* - ին, քան *ու* - ին»⁵: Նման կազմություններով կրկնավորները արդի պարսկերենում բառակազմական կաղապարների տեսակետից ամենամեծ հաճախականությունն ունեն: Շարահարական (առանց նշույթի) կրկնու-

⁴ Տե՛ս Gholām-Rezā Tajvidi. English Morphology Plus Word-formation Processes in English & Persian. Teh., 2005, էջ 32-33:

⁵ Գ. Մելիքյան, նշվ. աշխ., էջ 20:

թյունները երբեմն կարող են գործածվել շաղկապով, հմմտ. ʿ آرام آرام [ārām ārām] → آرام و آرام [ārām o ārām] «դանդաղ-դանդաղ», کتاب کتاب [ketāb metāb] → کتاب و کتاب [ketāb o metāb] «գիրք-միրք» և այլն:

Հայերենի կրկնությունների մի տեսակն են նախդրականները, որոնց եզրերը իրար միանում են նախդիրի միջոցով, ինչպես՝ տող առ տող, քայլ առ քայլ, տուն առ տուն և այլն: Այս կարգի կրկնավոր հարադրությունները պարսկերենում կազմվում են հավելադիր բառերի միջոցով, այսինքն՝ սրանք մտնում են պարսկերենի կրկնավոր հարադրություններում մեր առանձնացրած երրորդ տեսակի՝ հավելադրական կրկնավորների մեջ:

Հավելադիր բառերը պարսկերենի խոսքի մասերից մեկն են: Դրանք, միշտ անփոփոխ ձևով հանդես գալով, դրվում են անվանական խմբից առաջ (բացի را [ra]-ից, որն ուղիղ խնդիրի նշան, որոշիչ հոդ է և դրվում է անվանական խմբից հետո) և որոշում են նրա դերը⁶: Ամեն դեպքում հավելադիրները պարսկերենի քերականության բարդ խնդիրներից են եղել և են: Կան բառեր, որոնք «իսկական հավելադիրներ» անվանումով միշտ գործածվում են իբրև հավելադիր, և կան նաև բառեր, որոնք տարբեր կիրառություններում կարող են հանդես գալ կամ իբրև հավելադիր, կամ էլ իբրև ածական, գոյական և մակբայ: Հավելադիր բառերը բաժանվում են պարզ և բարդ տեսակների⁷:

Հատկանշական է, որ հավելադիրների մի մասը համարժեք է հայերենի հոլովներիին, այլ կերպ ասած՝ պարսկերենում հոլովների բացակայությամբ հավելադիր բառերը որոշում են անունների դերերը:

Հավելադիր բառերը պարսկերենում շատ գործածական են նաև տարբեր կարգերի զուգորդություններ կազմելու գործում, այդ թվում՝ կրկնավորներ, ինչպես՝ سر تا سر [sar tā sar] «ծայրից ծայր», خود به خود [xod be xod] «ինքնիրեն, իրեն-իրեն», خم اندر خم [xam andar xam] «ծուռումուռ, ոլոր-մոլոր», پی در پی [pey dar pey] «իրար հետևից, անընդհատ» և այլն:

Ինչպես հայերենում, այնպես էլ պարսկերենում կան այնպիսի կրկնավոր կապակցություններ, որոնք քերականական հարաբերության մթազնելու հետևանքով գրվում են համադրական ձևով՝ իբրև մի բառ, միայն թե պետք է նշել, որ պարսկերենի հավելադրական և շաղկապական կրկնավորներում այս փոփոխությունը կատարվում է նրանց բաղադրիչների միջև առկա հավելադրի կամ շաղկապի վերածումով՝ [a] (alef) բառակազմիչ տարրի: Շարահարական առանց նշույթի կրկնավորներում՝ [a] (alef) բառակազմիչ տարրը պարզապես դրվում է եզրերի միջև, ուստի, ըստ պարսկերենի ուղղագրական կանոնների, կարող է կցվել առաջին եզրի վերջին տառին: Հմմտ.՝ գույն-գույն → գույնզգույն, շար ի շար → շարիշար, անց ու դարձ → անցուդարձ և այլն, رنگ به رنگ [rang be rang] → رنگارنگ [rangārang] «գույնզգույն», سر تا سر [sar tā sar] → سراسر [sarāsar] «ծայրից ծայր», گرم گرم [garm garm] → گرمگرم [garmāgarm] «ջերմաջերմ» և այլն: Նշենք, որ եթե կրկնավոր հարադրության առաջին եզրի վերջին հնչյունը ձայնավոր է, ապա [a] (alef)-ից ա-

⁶ Տե՛ս Dr. Xosro Gholamali-Zade, Saxt-e zaban-e farsi (Պարսից լեզվի կառուցվածքը), Teh., 1374 (1995), էջ 49-51:

⁷ Տե՛ս Dr. Mahdi Maškūttodini, Dastūr-e zabān-e fārsi, vajegān va peyvandhāye sāxti (Պարսից լեզվի քերականություն, բառերը և կառուցվածքային կապակցությունները), Teh., 1386 (2007), էջ 110-126:

ռաջ հանդես է գալիս մի այլ հնչյուն՝ ى [y], ինչպես՝ رو به رو [rū be rū] → رویارو [rūyarū] «դեմ առ դեմ», پی در پی [pey dar pey] → پی‌پی [peyāpey] «իրար հետևից, շարունակաբար» և այլն:

Որոշ քերականագետներ պարսկերենի նման բաղադրությունների ʾ [a] (alef) ձայնավորը համարում են միջածանց, սակայն ոմանք, պարսկերենում միջածանց գաղափարը չընդունելով, գտնում են, որ ʾ [a] (alef) ձայնավորը բառակազմական մի տարր է, որը տեղ է գտել հավելադրի կամ շաղկապի փոխարեն⁸:

Ինչպես հայերենում, այնպես էլ պարսկերենում կան կրկնավոր կամ կրկնական բայեր, որոնք ցույց են տալիս գործողության բազմապատիկություն կամ կրկնություն. դրանք կազմվում են արմատի կրկնությամբ, իսկ հարադրավոր բայերի մեջ հարադիրն է կրկնվում, ինչպես՝ վեր-վեր ընկնել, պատառ-պատառ անել⁹, عقب عقب رفتن [aqab aqab raftan] «հետ-հետ գնալ», تکه تکه کردن [tekke tekke kardan] «կտոր-կտոր անել» և այլն:

Կրկնավոր հարադրությունների մեջ կրկնվող բառը կարող է նաև ենթարկվել զանազան փոփոխությունների: Այս եղանակը երկու լեզուներում էլ շատ գործուն է առավելապես խոսակցական լեզվում: Պարսկերենում այս կարգի կրկնավորները կոչվում են اتباع [atbae]¹⁰:

Բառերի կրկնության ժամանակ եզրերից մեկի ձայնավորը կամ բաղաձայնը երբեմն վերածվում է ուրիշ հնչյունի կամ դուրս է ընկնում: Այսպիսի դեպքերում ընդլայնվում է բառի նշանակությունը: Հայերենում այսպիսի բաղադրիչները միանում են իրար ու շաղկապով կամ գծիկով, իսկ պարսկերենում՝ و (o) շաղկապով կամ պարզապես հարակցվում են իրար՝ առանց որևէ նշույթի: Հմմտ.՝ *ծակ-ծուկ, մանր-մունր, առք ու փառք*, سوراخ موراخ [sūrax mūrax] («ծակ-ծուկ»), ظرف و ظروف [zarf o zorūf] («աման-չաման»), چرت و پرت [čert o pert] («ափեղցփեղ») և այլն:

Հայերենում ու պարսկերենում հնչյունափոխությամբ կազմված կրկնավոր հարադրություններն ունեն հետևյալ ընդհանրությունները.

ա) երկու լեզուներում էլ բավականաչափ գործուն է կրկնավորների երկրորդ եզրի մեջ *ա* - ʾ (a-alef) և նրա կարճ տարբերակի՝ « ʾ » (a) ձայնավորի վերածվելը ու - ʾ (u) ձայնավորի:

Հմմտ.՝ *մարդ-մուրդ, աղբատ-ուղբատ, մանր-մունր*, پاره پاره [pāre pāre] («ճղճղված, պատառուտված»), چاله چوله [čale čūle] («փոս-փոս, անհարթություն») և այլն:

Կրկնավոր հարադրության բաղադրիչների հնչյունափոխությամբ հայերենում կա նաև պարսկերենից փոխառյալ تک و توک [tak o tūk] բառը՝ նույն հնչյունական կազմով՝ *թաքությունք*, նույն նշանակությամբ՝ «քիչ, հատուկենտ», որը հաճախ հանդիպում է ժողովրդախոսակցական լեզվում:

բ) Մի այլ եղանակ, որը և՛ հայերենում, և՛ պարսկերենում շատ գործուն է, այն է, որ երկրորդ եզրի սկզբում բաղաձայնը փոխվում է սովորաբար *մ* բաղաձայնի: Հմմտ.՝ *հաց-մաց, սուտ-մուտ, սխալ-մխալ*, کتاب متاب [ketāb metāb] «գիրք-միրք», غلط ملط [laalat malat] «սխալ-մխալ» [xabar

⁸ Տե՛ս Gholām-Rezā Tajvidi, նշվ. աշխ., էջ 29:

⁹ Տե՛ս Ա. Մարգարյան, Հայերենի հարադիր բայերը, Եր., 1966:

¹⁰ Տե՛ս Taqi Vahidyān Kāmyār, Dastūr-e zabān-e fārsi-ye goftāri (խոսակցական պարսից լեզվի քերականություն), Teh., 1384 (2005), էջ 76-81:

mabar] «լուր-մուր» և այլն: Հասկանալի է, որ մ-ով սկսվող բառերում այս-պիսի դեպքերում մ բաղաձայնը փոխվում է մի այլ բաղաձայնի. مرغ 'پ → م مرغ [morλ porλ] «հավ և նման կենդանիներ, հավեր-մավեր», مَس تَس 'ت → م mes tes] «պղինձ և նման մետաղներ» և այլն:

զ) Հայերենում կան այնպիսի կրկնավոր հարադրություններ, որոնց երկրորդ մասի սկզբում ավելանում է մի բաղաձայն, սովորաբար՝ մ: Նկատելի է, որ այս եղանակով կրկնություններ են կազմվում ձայնավորով սկսվող բառերից, ինչպես՝ ավել-մավել, օրենք-մօրենք, աղ ու մաղ, ընկեր-մընկեր և այլն:

Այս կարգի կրկնավոր հարադրություններ պարսկերենում չեն կազմվում:

դ) Հայերենին հատուկ մի առանձին խումբ են ներկայացնում այն կրկնությունները, որոնց առաջին մասի սկզբում դուրս է ընկնում բառասկզբի բաղաձայնը, ինչպես՝ այլու-փայլուն, ավալ-թավալ, առք ու փառք և այլն:

Նման կրկնավորներ պարսկերենում չեն կազմվում:

ե) Հայերենի հնչյունափոխված կրկնավորների մեջ պետք է դնել ածականների (առավել հաճախ՝ գույն ցույց տվող) առաջին վանկի հնչյունափոխությամբ կրկնությունը բառի սկզբում, որով սաստկանում է բառի նշանակությունը, ինչպես՝ կափ-կանաչ, ճեփ-ճերմակ, սիփ-սպիտակ և այլն:

Այս եղանակը չկա պարսկերենի բառակազմության համակարգում:

զ) Պարսկերենում կան բավականաչափ դեպքեր, երբ կրկնավոր հարադրությունների երկրորդ մասի սկզբում բաղաձայնը փոխվում է پ [p], ب [b] կամ و [v] բաղաձայնների, ինչպես՝ چرت و پرت [čert o pert] «ափեղջիփեղ», کار و بار [kār o bār] «գործ-մործ», هير و وير [hir o vir] «խառնաշփոթ, իրարանցում» և այլն:

է) Պարսկերենում կազմվում են այնպիսի կրկնավորներ, որոնց երկրորդ մասի բաղաձայնը մի այլ բաղաձայնի փոխվելու հետ միաժամանակ, փոփոխված բաղաձայնի հետ հանդես եկած « ' » [o] կարճ ձայնավորը ևս փոխվում է « َ » [e] կարճ ձայնավորի, ինչպես՝ خل و چل [xol o čel] «գիժ, աննորմալ», شل و ول [šol o vel] «թույլ, ոչ ամուր» և այլն:

ը) Պարսկերենում երբեմն բառը մի հնչյունից ավելի է ենթարկվում փոփոխության, և անգամ կարող է պատահել, որ կրկնավոր բաղադրիչները ունենան միայն մեկ ընդհանուր հնչյուն, ինչպես՝ قَر و قَاتِي [qar o qāti] «խառնիխուռն»:

թ) Պարսկերենին հատուկ մի առանձին խումբ պետք է համարել գոյականական կրկնավոր հարադրությունները, որոնց առաջին եզրի գոյականը դրվում է եզակի թվով, իսկ երկրորդը՝ հոգնակի: Այս կարգի կրկնավորների բաղադրիչները հարակցվում են و [o] շաղկապով և ունեն հավաքական նշանակություն, ինչպես՝ ظرف و ظروف [zarf o zorūf] բառացի՝ «աման և ամաններ = աման-չաման», حق و حقوق [haq o hoqūq] բառացի՝ «իրավունք և իրավունքներ = բոլոր իրավունքները», رسم و رسوم [rasm o rosūm] բառացի՝ «ավանդույթ և ավանդույթներ = բոլոր ավանդույթները» և այլն:

Անհրաժեշտ է նշել, որ այս եղանակով կազմված կրկնավորների բաղադրիչները արաբերենից փոխառյալ բառեր են, որոնց հոգնակի թիվը կազմվում է թեքական ձևով՝ مكسر [mokassar]: Այս բառերը թեպետ արաբերենից պարսկերենին անցած բառեր են, բայց միայն պարսկերենում է, որ

նրանց եզակի ու հոգնակի թվերի հարակցությամբ կրկնավոր հարադրություններ են կազմվում:

Պարսկերենում անձնանունները ևս հնչյունափոխությամբ կրկնավոր հարադրություններ են կազմում, երբ այդ անձնավորությունը համարվում է անկարևոր և արհամարհված մարդ, ինչպես` خسرو مسرو [xosro mosro], پرویز مرویز [parviz marviz] և այլն: Այս եղանակն առավելապես հատուկ է ժողովրդախոսակցական լեզվին¹¹:

Անձնանուններից հնչյունափոխությամբ կազմվող կրկնավորները, որոնց մասին հայ լեզվաբանների աշխատություններում հիշատակության չենք հանդիպել, երբեմն գործածվում են ժողովրդախոսակցական լեզվում` արհամարհական երանգով, ինչպես` *ես Արթուր-Մարթուր չգիտեմ*:

Կրկնավոր հարադրությունները թե՛ հայերենում և թե՛ պարսկերենում արտահայտում են հավաքականության և սաստկության նշանակություն:

«Միննույն արմատի (բառի, բառահիմքի, բառաձևի) կրկնությամբ իմաստի ծավալման կամ նոր իմաստ արտահայտելու հնարավորության գիտակցումը արդեն իսկ դուռ է բացում տարբեր արմատներ (բառեր, բառահիմքեր, բառաձևեր) իրար միացնելով` ստանալու շարահյուսական նորանոր զուգորդություններ, դրանցից էլ` բարդ բառեր` բառային մեկ ընդհանուր, միասնական նշանակությամբ: Կրկնավոր զուգորդությունների առաջացումը լեզուներում, այդ թվում թե՛ հայերենում և թե՛ պարսկերենում պարարտ հող նախապատրաստեց հարադրավոր զուգորդությունների գոյացման համար»¹²:

Ներկա հոդվածում բերված տվյալներից և օրինակներից պարզվում է, որ տարբեր տեսակների կրկնավոր հարադրությունները հայերենում և պարսկերենում կազմվում են տվյալ լեզվին բնորոշ եղանակներով, սակայն կան նաև այնպիսի կրկնություններ, որոնք, ըստ կրկնության եղանակի և արտահայտող իմաստի, ընդհանուր են երկու լեզուներում:

ИСА АЛИРЕЗАИ – Сходства редупликативных аналитических конструкций в современных армянском и персидском языках. – Факты и примеры, приведённые в статье, показывают, что редупликативные аналитические сложные слова в армянском и персидском языках создаются в соответствии с моделями, присущими каждому из них. Вместе с тем имеются редупликативные конструкции, значения и способ удвоения которых в этих языках одинаковы.

EISA ALIREZAEI – The Similarities of Reduplicative Analytical Words in Modern Armenian and Persian. – The data and examples considered in the article prove that different kinds of reduplicative analytical forms in Armenian and Persian are built in specific ways in each language. However, there exist reduplicative forms common to both languages as to the mode of reduplication and the meaning expressed by them.

¹¹ Տե՛ս **Taqi Vahidyān Kamyār**, նշվ. աշխ., էջ 79:

¹² Տե՛ս **Գ. Մելիքյան**, նշվ. աշխ., էջ 15 և հաջ.: